Ընդհանուր տեսադաշտ

1. ***Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը քաղաքի զարգացման հիմնական գերակայությունների մասին:***

Քաղաքի ճիշտ պլանավորում, հանգստյան գոտիների պահպանում և նորացում: Քաղաքի կենտրոնում բարձրահարկ շենքերի ոչպլանային նախագծերի դադարեցում: Տրամվայի վերականգնում, կենտրոնական ջեռուցման ժամանակակից տեխնոլոգիայով զարգացում և այլն:

Զարգացում և տնտեսություն

2. ***Խնդրում ենք, համառոտ նկարագրեք քաղաքի երկարաժամկետ տնտեսական զարգացման Ձեր տեսակետը/պլանը (եթե այդպիսին ունեք):***

Փոքր և միջին բիզնեսի աջակցություն, նոր ձեռնարկությունների ստեղծում և ժողովրդի աշխատանքային զբաղվածություն:

3. ***Ձեր կարծիքով, որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Ձեր քաղաքի տնտեսական զարգացմանը:***

Կոռուպցիոն և քողարկված, ոչթափանցիկ տենդերները:

4. ***Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր քաղաքի հիմնական հնարավորությունները / գերակայությունները, որոնք կձգտեք կիրառել քաղաքի տնտեսական և քաղաքային զարգացման հասնելու համար:***

Քաղաքի հին մշակութային և ճարտարապետությունը, որոնք կկիրառենք զբոսաշրջիկներ ներգրավելու համար:

5. ***Ինչպիսի՞ն են Ձեր բյուջետային գերակայությունները: Խնդրում ենք համառոտ մեկնաբանեք Ձեր բյուջետային քաղաքականությունը:***

Ենթակառույցի զարգացում, էկոլոգիա և հանգստյան գոտիների պահպանում-ավելացում, սոցիալական հարցերի կարգավորում, փոքր և միջին բիզնեսի աջակցություն, առողջապահություն, քաղաքային տրանսպորտի ավելի լավ կազմակերպում, բարեկարգում, քաղաքի կենտրոնական ջեռուցման համակարգի ստեղծում:

6. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի բիզնես և կոմերցիոն ենթակառույցի բարելավման, ներդրումների գրավմանը նպաստելու համար:***

Կզարգացնենք ենթակառույցը, ավելի գրավիչ միջավայր կստեղծենք արտասահմանյան ներդրողներին հետաքրքրելու համար. կաջակցենք և կհոգանք փոքր և միջին բիզնեսի զարգացման մասին:

Քաղաքային զարգացում/քաղաքի նախագծում /բնակարանաշինություն

7. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքացիների համար ավելի լավ բնակության պայմաններ ստեղծելու համար:***

Կսահմանվի խիստ կարգավորում բնակարանաշինարարության վրա, որպեսզի այն համապատասխանի եվրոպական չափորոշիչներին: Մունիցիպալային բնակիչների համար կստեղծենք բազիս, կհոգանք անօթևան թբիլիսեցիների համար մունիցիպալային ապաստարանների և տների կառուցման մասին:

8. ***Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքի փողոցների մաքրությունը բարելավելու համար:***

Քաղաքին կավելանան աղբամաններ և ավելի սիստեմատիկաբար և կազմակերպված կդառնա փողոցների, բակերի և զբոսայգիների մաքրումը:

Ենթակառույց և տրանսպորտ

9. ***Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման համար:***

Մունիցիպալային տրանսպորտի կազմակերպումը տեղի կունենա բնակչության շահերի հաշվառումով, հրապարակների և փողոցների բեռնաթափման համար կմշակվի հատուկ պլան:

10. ***Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման համար:***

Կկարգավորվեն ճանապարհային նշանները և ստորգետնյա անցումները, կկառուցվեն նորերը:

11. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք սահմանափակ կարողություններով անձանց քաղաքում տեղաշարժի հնարավորությունների բարելավման համար:

Բոլոր վարչական շենքերում, առողջապահության օբյեկտների և անհրաժեշտություն ներկայացնող այլ վայրերում սահմանափակ կարողություններով անձանց տեղաշարժըկլինի հարմարավետ և չափորոշիչներին համապատասխան:

Մշակույթ և կրթություն

12. Ի՞նչ ծրագրեր կիրականացնեք մշակութային կյանքի բարելավման համար::

Ես ինքս արվեստագետ են և համապատասխանաբար առավելագույնս կձգտեմ աջակցություն ցուցաբերել արվեստագետ մարդկանց և մշակութային միջոցառումներին և դրանց զարգացմանը: Կաջակցեմ մշակութային միջոցառումներին, թատրոններին, օպերաներին, ազգագրականին, բոլոր շնորհալի ստեղծագործողին: Այդպիսի միջոցառումները և դրանց մասնակիցները չեն ընտրվի ոմանց, թեկուզև իմ սուբյեկտիվ տեսանկյուններով և շահերով:

13. Ձեր իրավասության սահմաններում, ինչպե՞ս կգործեք կրթության մատչելիության և որակի բարելավման նպատակով:

Քաղաքի բյուջեից կֆինանսավորեմ շնորհալի, առաջադեմ, սոցիալապես անպաշտպան ընտանիքի ուսանողներին, կհոգամ մասնագիտական ուսումնարանների զարգացման մասին: Անհրաժեշտ մասնագիտություններից ուսումնառությունը կֆինանսավորվի քաղաքապետարանի բյուջեից:

Անվտանգություն և հանցագործություն

14. Ձեր իրավասության շրջանակներում, ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք հանցագործության դեմ պայքարի, հանցանքի կանխարգելման համար:

Կհամագործակցեմ ներքին գործերի նախարարության հետ: Այս տեսակետից կաջակցեմ բոլոր նախաձեռնությունները: Կհոգամ ծնողազուրկ և անօթևան երեխաների և նրանց ապաստարանների մասին:

Առողջապահություն և սոցիալական քաղաքականություն

15. Ինչպիսի՞ն կլինի քաղաքում Ձեր սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ սոցիալական ծրագրերի իրականացման համար կհոգաք:

Անհրաժեշտության դեպքում, քաղաքապետարանի բյուջեից սոցիալապես անպաշտպանների համար առանձնացված հատկացված կլինի լրացուցիչ գումար. նրանց և թոշակառուների համար կլինեն ամենամյա վաուչերներ կոմունալ հարկերի համար. երրորդ և հետագա երեխաները ծնվելիս կտրվի գումար. քաղաքային տրանսպորտով ուղևորությունը կլինի անվճար ուսանողների, թոշակառուների և սոցիալապես անպաշտպանների համար:

16. Ի՞նչ միջոցառումներ կիրականացնեք Ձեր քաղաքում առողջապահության ընդհանուր ցուցիչների բարելավման համար:

Միջավայրը պետք է դառնա էկոլոգիապես առավելագույնս անվտանգ:

17. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում անօթևանների սոցիալական պայմանները բարելավելու համար:

Անապաստան և անօթևան մարդկանց համար պետք է կառուցվեն տներ:

Էկոլոգիա, ռեկրեացիա և սպորտ

18. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման համար:

Թեկնածուի տեսակետը այս հարցի կապակցությամբ անհայտ է:

19. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքում ռեկրեացիոն գոտիների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար:

Պետք է վերականգնվի տրամվայի գիծը: Անցկացվի կենտրոնական ջեռուցում, տնկարկվեն որքան կարելի շատ տնկիներ և դադարեցվի ռեկրեացիոն գոտիների վերացումը:

20. Ի՞նչ մտադրություններ ունեք սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-ռեկրեացիոն ենթակառույցի բարելավման համար:

Հեծանվի արահետները պետք է ավելացվեն, կառուցվեն և բարեկարգվեն նոր մարզական դահլիճներ,բարեկարգվեն և կառուցվեն մարզադաշտեր և մանկական հրապարակներ:

Թբիլիսի

21. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում քաղաքում անցկացնել հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու համար:

Փողոցները սարքավորվեն ճանապարհային նշաններով և լուսանշաններով, կառուցել նոր ստորգետնյա անցումներ:

22. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և ճանապարհային խցանների կրճատման նպատակով:

Երթևեկության պլանավորման վերանայում և անհրաժեշտության դեպքում նոր շրջանցիկ ճանապարհների շինարարություն:

23. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել փողոցային կենդանիների հիմնախնդրի կարգավորման համար:

Պետք է ստեղծվեն անտեր կենդանիների ապաստարաններ: Կստեղծվեն հատուկ տեղեր կենդանիների զբոսանքի համար:

24. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդիրների կարգավորման համար:

Վթարային շենքերի նորոգում: Եթե դա հնարավոր է, գտնել ներդնող և կառուցել նորը, բնակիչների շահերի հաշվառումով:

25. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի պատմական արտաքին տեսքը պահպանելու համար

Եթե դա անհնար է վերականգնել, տեղի կունենա վերանորոգում, այլ դեպքում կկառուցվի նորը, համանման ճարտարապետությամբ: Ընդհանուր առմամբ, քաղաքում շինարարության հարցը կվճռի ճարտարապետների և ուրբանիսների հատուկ հանձնաժողովը:

26. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարության հարցին:

Շրջանցիկ երկաթգծի շինարարությունը պետք է շարունակվի: Սակայն բնակչության շահերի հաշվառումով:

27. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարության հարցին:

Վակեի զբոսայգում ամեն տեսակ շինարարություն պետք է դադարեցվի: